




ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ԳԱԼՖԱՅԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Վ Ա Զ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Զ Ր Ի Ս Տ Ո Ս Ի,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱՆԴԱՄՈՅ
ՈՒԽՏԻՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ,
ՀԱՐԱԶԱՏ ԴԱՏԵՐԱՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ,
ՅԱՐԳԱՐԺԱՆ ԱՆԴԱՄՈՅ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ԵՒ ՀԱՄԱՅՆ ՍԱՆՈՒՀԵԱՅ ՀՆՈՅ ԵՒ ՆՈՐՈՅ,
ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐԶԻ
ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

«Քանզի գլուխ պատուիրանին սէր է, ի սուրբ սրտէ և ի մտաց բարեաց
և լանկեղծաւոր հաւատոց» (Ա Տիմոթ. Ա 5):

Աստուծոյ ողորմութեամբ, ահա հարիւր տարի կը լրանայ երանելի այն
օրէն, երբ սիրոյ մեծ պատուիրանին նուիրուած բարեպաշտ ու առաքինի հոգի
մը՝ Սրբուհի մայրապետ Գալֆայեան, հիմնեց իր որբանոցը, որուն սեղանէն
հաց և լոյս բաշխուեցան առատապէս, Վոսփորի ափերուն անտէր ու անմխի-
թար մնացած մեր ազգի զաւակներուն:

Լուսաբնակ Սրբուհի մայրապետ և իր ձեռակերտը եղան տևապէս իրաւ
մարմնացումը քրիստոնէական մարդասիրական ոգիի, սուրբ սրտի, բարի
մտածումի և անկեղծաւոր հաւատքի:

Այսօր մեր Ա. Եկեղեցին և մեր ազգը երախտագիտութեամբ կը յիշեն
անունը Սրբուհի մայրապետին ու կը փառաւորեն զայն և իր հիմնած հաստա-
տութիւնը՝ Գալֆայեան որբանոցը: Երախտագիտութեամբ կը յիշեն նաև անուն-

ները հոգեւոյս հիմնադրի յաջորդներուն և բոլոր անոնց, որոնք սուրբ արտով, անձնուրաց աշխատանքով և ջերմ եռանդով մէկ ամբողջ դար շարունակ կանգուն ու շէն պահած են Գալֆայեան հաստատութիւնը:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» (Մատթ. Ե 8):

Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն օրհնութիւն Սրբուհի մայրապետի լուսափայլ յիշատակին և իր աստուածահաճոյ գործին: Օրհնութիւն Գալֆայեան որբանոցի բոլոր ուխտապան ու առաքինազարդ մայրապետներու և բարերարներու յիշատակին:

Օրհնութիւն նաև որբանոցի ներկայ բարեջան միաբանութեան, խնամակալութեան և նուիրատուներուն, գլխաւորութեամբ Մայր Մարիամ աւագ սարկաւագ Քեօսէեանի, որոնք նոյնքան սուրբ արտով, բարի մտածումներով և անկեղծաւոր հաւատքով վառ կը պահեն նուիրական այն ջանք, զոր սուրբ ձեռք մը վառեց հարիւր տարիներ առաջ, արևոտ օր մը:

Թող Աստուած իր պահապան ամենագոր Աջը տարածեալ պահէ Գալֆայեան որբանոցի վրայ և զայն պահպանէ միշտ խաղաղութեան ու բարօրութեան մէջ, միշտ շրջապատուած հայ բարեպաշտ ժողովուրդի յարգանքով ու գուրգուրանքով:

«Այսուհետև հաստատուն եղերուք, անշարժ կացեք, առանել լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասցիք զի վաստակքն ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն» (Ա. Կորնթ. ԺԵ 58):

Ամէն:

Աւագ Սարկաւագ Քեօսէեան

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14-ն լուսուարի
1966 Փրկչական ամի,
և ի տոմարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

